ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2023թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20.1 կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Անաստաս Միկոյան փողոցի հ.111/12 հասցեում գտնվող 0.2հա (հողամասի ծածկագիր՝ 01-004-0102-0024), Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.48/5 հասցեում գտնվող 0.5333հա (հողամասի ծածկագիր՝ 01-004-0102-0021) հողամասերի և դրանց կից գտնվող 01-004-102-0032, 01-004-102-022, 01-004-102-023 և 01-004-102-002 ծածկագրերով համայնքային սեփականություն հանդիսացող 5.13157հա (ընդհանուր՝ 5.8649հա) մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի Անաստաս Միկոյան փողոցի հ.111/12 հասցեում գտնվող 0.2հա (հողամասի ծածկագիր՝ 01-004-0102-0024), Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.48/5 հասցեում գտնվող 0.5333հա (հողամասի ծածկագիր՝ 01-004-0102-0021) հողամասերի և դրանց կից գտնվող 01-004-102-0032, 01-004-102-022, 01-004-102-023 և 01-004-102-002 ծածկագրերով համայնքային սեփականություն հանդիսացող 5.13157հա (ընդհանուր՝ 5.8649հա) հողամասերի նպատակային նշանակությունները փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

Նշված հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից նախատեսվում է համայնքային սեփականություն հանդիսացող 5.8649հա հողամասում Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան՝ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) հիման վրա իրականացնել ֆուտբոլի դպրոցի կառուցման աշխատանքներ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից ֆուտբոլի դպրոցի կառուցման աշխատանքների և Երևան համայնքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցված ֆուտբոլի դպրոցն անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային:

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն, որ գործող օրենսդրության համաձայն հասարակական նշանակության օբյեկտները կարող են կառուցվել բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերում, ուստի անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի Անաստաս Միկոյան փողոցի հ.111/12 հասցեում գտնվող 0.2հա (հողամասի ծածկագիր՝ 01-004-0102-0024), Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.48/5 հասցեում գտնվող 0.5333հա (հողամասի ծածկագիր՝ 01-004-0102-0021) հողամասերի և դրանց կից գտնվող 01-004-102-0032, 01-004-102-022, 01-004-102-023 և 01-004-102-002 ծածկագրերով համայնքային սեփականություն հանդիսացող 5.13157հա (ընդհանուր՝ 5.8649հա) հողամասերի նպատակային նշանակությունները փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված

բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և վերջինիս կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ